# ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 5-րդ դասարան

# Մ Ա Յ Ր Ե Ն Ի

### ԹԵՍՏ 1

Շրջան, քաղաք ______________________________________________________

Ուսհաստատություն ___________________________________________________

Դասարան ___________________________________________________________

Ա. Ա. Հ. ___________________________________________________________

Ամսաթիվ ___________________________________________________________

*Սիրելի՛ աշակերտ*

Թեստ-գրքույկն ընդգրկում է **20** առաջադրանք:

**1-4-րդ,6,7-րդ,14-րդ, 16-րդ և 20-րդ** առաջադրանքները լրացնել:

**5-րդ, 11-րդ և 19-րդ** առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

**8-10-րդ,12,13-րդ, 15-րդ և 17,18-րդ** առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը (3) և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է **1** միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը **20:**

Աշխատանքի կատարման համար տրվում է **50** րոպե:

*Ցանկանում ենք հաջողություն*

2018 -2019

## Թեստ 1

*1-4-րդ առաջադրանքները լրացնել*

1. Ազատ , սովորական խոսքի շարադրանքը կոչվում է_______________________________________:

2. Առանց ձայնավորի հնարավոր չէ կազմել _________________________:

3. Բաղաձայններից *-յ -* կոչվում է _________________________________:

4. *Արտահայտությունը գրել մեկ բառով:*

   *չորացած տերևների ձայնը -* _______________________

5. *Համապատասխանեցնել.*

| Բառ | Նախածանց |
|---|---|
| 1) սովոր | ա) տար |
| 2) բնույթ | բ) արտա |
| | գ) նախ |
| | դ) տ |

Պատասխան՝ 1-___, 2-___

*6,7-րդ առաջադրանքները լրացնել*

6. **Թվականը գրել տառերով:**

   *19* - _______________________________________________________________________:

7. ***« Եղեգնուհին »*** ստեղծագործության հեղինակն է՝ _____________________________________:

*8,9- րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ*

8. *Չորս հնչյուն ունեցող բառերն են՝*

   1) ժպիտ, 2) արագ, 3) որդ, 4) արև, 5) ծանր

9. **Ո՞ր բառերում է գրվում** *-յա-* **երկհնչյունը:**

   1) Կեսար..., 2) սոց...լական, 3) ս...նս, 4) կղզ...կ, 5 ) միմ...նց, 6) լ...րդ, 7) հոգ...կ

10. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

    **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում** *- է-* **:**

    1) մանր..., ոսկ..., ելև...ջ
    2) ինչևից..., որև..., ան...ական
    3) որևից..., ծով...զր, գոմ...շ
    4) առ...ջ, երբև..., վայր...ջք

11. *Համապատասխանեցնել.*

| *Բառ* | *Բաց թողնված տառ* |
|---|---|
| 1) նր...երշիկ | ա) *ձ* |
| 2) տե...ր | բ ) *փ* |
| 3) դր...ել | գ ) *ք* |
| 4) ծվա...եղ | դ) *թ* |
| | ե) *ծ* |
| | զ) *բ* |
| | է) *գ* |
| | ը) *դ* |

Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___, 4-___

*12,13 -րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ*

12. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

Ուժեղ *1) փոթորիկը, 2) զեփյուռը* վնասեց ամբողջ բուսականությունը:

13. Նախադասության մեջ փոխաբերական իմաստ ունեցող բառն է՝

Վերջապես *1) արևոտ* եղանակը դադարում է, և աղջիկները կանգնում են
*2) տխուր*
*3) անձրևոտ*

նուրբ եղեգների նման:

14. *Լրացնել.*

*Կրակի վրա յուղ լցնել* դարձվածքի իմաստն է՝ ________________________________________:

15. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

*Արի՛, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,*
*...................................................................................................*
*Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,*
*Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:*

**Բաց թողած տողած տողն է՝**

1) Նա առաջին կանչն է եղել դյուցազնական մեր նախահոր...
2) Մեր սրտի ջուր, մեր ծեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն...
3) Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն...

16. Լրացնել.

*Քանքար* բառի բացատրությունն է՝ ________________________________________:

*17,18- րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ*

17. *Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:*

1) դուռը բացել, 2) լեզու գտնել, 3) տուն գնալ, 4) սունկ հավաքել, 5) սիրտ անել, 6) թև առնել, 7 ) ճամփա կտրել

18. *օթևան* բառին հոմանիշ են՝

1) անտուն, 2) իջևան, 3) պանդոկ, 4) գահավորակ, 5) կայան

19. *Համապատասխանեցնել.*

| Ստեղծագործություն | Հեղինակ |
|---|---|
| 1) «Հայոց լեզուն» | ա) Խաչիկ Դաշտենց |
| 2) «Խոսող ծուկը» | բ) Մկրտիչ Կորյուն |
| 3) «Կարապը» | գ) Ղազարոս Աղայան |
| | դ) Նաիրի Զարյան |
| | ե) Հովհաննես Թումանյան |
| | զ) Լեոնարդո դա Վինչի |

Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___

20. *Լրացնել.*

Ըստ «Մուրացկանը և հարուստը» հեքիաթի՝

*« - Դուք իմ որդիներն եք, մեծ տառապանքով, արևահարվելով, կարկտի ու անձրևի տակ մնալով, ցրտահարվելով եմ ծեզ ունեցել, - ասում է, - վաղը ջուր եմ տաքացնելու, որ բոլորիդ լողացնեմ»:*

Խոսքերը պատկանում են________________________________հերոսին:

Լրացնում է ստուգողը

| Ընդհանուր միավորը | |
|---|---|
| Գնահատականը 10 բալանոց սանդղա | |

Ստուգող՝ ________________________ _____________

Ա.Ա.Հ ստորագրություն